տարի մեծ վարդապետն Յովսէփ ի վանսն Ախչոց» (*)։ Հաւանօրէն նոյն պիտի լինի սա այն Յովսէփ վարդապետի հետ, որին Վանականի և Վարդանի հետ դիմել էր Կոստանդին կաթուղիկոսը իմանալու նրանց կարծիքը՝ Հռոմի կողմից Ս. Հոգու մասին յարուցած դաւանաբանական խնդրի նկատմամբ. գուցէ նոյն է նաև Յովհաննէս աբեղայի յիշած նոյնանուն Յովսէփը որի օրինակից արտագրել է ինքը իւր կէս Աստուածաշունչը, «ի ստոյգ և ընտիր աւրինակէ, որ կոչի Բազնայրեցի, զոր սբ. վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ» (**)։ Իսկ Սադուն Աթաբէգը ԺԳ. դարի հայ իշխանների մէջ առանձին մի գեղեցիկ խաչքար բազալտի քարից (պաs-կեr 184). պատուանդանը դեռ իւր տեղումն է, բայց ոչ ամբողջովին. պոկուած են դարձեալ քարերը և ցրուած չորս կողմը, որոնցից մէկի վերայ գտնւում է արձանագրութեան թուականը. «ի թվ. ՉԼԶ» (= 1287)։ Արձանագրութիւնը փորագրուած է պատուանդանի չորս կողի վերայ և հետևեալ բովանդակութիւնն ունի. Արղունի աշխարհակալութեան, Դաւթի թագաւորութեան, Տէր Յովանիսի հայրապետութեան, «եւ ի տէրութեա. տեղոյս պարոն Աշոտոյ». Ղազար, Աստուածատուր, տէր Աւագ ջուր են բերում, կանգնեցնում են այս խաչը, տնկում են Յովայն այգին,

Պասկեr 182.

շատ յայտնի անձնաւորութիւն էր, Մահկանաբերդի տէրը, որ Աթաբէգութեան պաշտօն ստացաւ Աւագի մահուանից (✻ 1250) յետոյ և մեռաւ 1284 թուին (***)։ Ապա, ուրեմն, Ղարասլանի արձանագրութեան ծագումը պէտք է դնել 1279–1284 թ. թ.։

Բայց մենք ունինք այստեղ մի ուրիշ արձանագրութիւն դարձեալ նոյն Սադուն Աթաբէգի անուան յիշատակութեամբ. տաճարի արևելեան կողմն ընկած է որ ամիր սպասալար աթաբակ Սադունը «նուվէր (s!) ետ եկեղեցոյ» (Յաւել. Ա. 12)։ Արձանագրութեան պատմական անձնաւորութիւնների նկատմամբ ժամանակագրական մեծ չփոթութիւն կայ. Արղունի աշխարհակալութիւնն ընկնում է 1284–1291 տարիներին, մինչդեռ Դաւիթ Վրաց թագաւորը մեռած էր արդէն 1272 ին, երբ յաջորդեց նորա որդին Դեմետրէն 1272–1289. Սադունը նոյնպէս մեռած էր, երբ գրուեցաւ արձանագրութիւնը։ Նշանակում է Սադունը կարգադրութիւնը կատարել է 1272 թուից առաջ, երբ կենդանի էր Դաւիթ թագաւորը և միայն յետին թուով գրի առնուած Արղունի աշխարհակա-

(*) Երևան թանգարան, Ձեռ. № 670։

(**) Ձեռ. Էջմ. № 920 նժ.։

(***) Շողակաթ, Հայագ. ժողովածու. 1913. մեր Ձագավանից ժողովը յօդուածը եր. 26։